Տեղեկություններ ամբիոնի մասին

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության ամբիոնը ձևավորվել է 2012 թ.-ին:

2012-2013 թթ.-ին ամբիոնը ղեկավարել են՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարեն Բիշարյանը, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արսեն Մարտիրոսյանը:

2014 թ.-ից ամբիոնը ղեկավարում է իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արտակ Հովհաննիսյանը (էլ. փոստ՝ artakhovhannisyan@list.ru):

Ամբիոնի դոցենտի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության փոխգնդապետ Հասմիկ Սմբատյանը:

Ամբիոնի ավագ դասախոսի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության կապիտան Արտակ Ղազարյանը:

Ամբիոնի դասախոսի պաշտոնը զբաղեցնում է ոստիկանության ավագ լեյտենանտ Գեղեցիկ Վարդանյանը:

Ամբիոնում համատեղման կարգով և պայմանագրային հիմունքներով դասավանդում են ոստիկանության և իրավապահ այլ կառույցների ներկայացուցիչներ:

Ամբիոնի գործունեության հիմնական ուղղություններն են՝ կրթական և ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, գիտական հետազոտությունների իրականացումը, ամբիոնի մասնագիտական ուղղվածությամբ ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնագործնական ձեռնարկներ և գիտաուսումնական այլ նյութեր մշակելը, ատենախոսությունների վերաբերյալ առաջատար կազմակերպության կամ պաշտոնական ընդդիմախոսի կարծիքների պատրաստելը, ամբիոնին կից գործող գիտական խմբակի գործունեության կազմակերպումը, կրթության որակի ապահովման քաղաքականության իրականացմանը նպաստելը:

2018-2019 ուստարում քրեական դատավարության ամբիոնի դասախոսական կազմը ղեկավարում է մագիստրատուրայի 25 սովորողների մագիստրոսական թեզերը:

2012-2018 թթ. ընթացքում ամբիոնի դասախոսական կազմը հրատարակել է 20-ից ավելի գիտական հոդվածներ, 5-ից ավելի ուսումնամեթոդական, ուսումնական ձեռնարկներ, 2 դասագիրք և 3 մենագրություն, ամբիոնի կողմից պատրաստվել են դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների վերաբերյալ առաջատար կազմակերպության 5-ից ավելի կարծիքներ:

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ